ՍԱՆԱՀԻՆԻ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՁԱՐԴԱԿԱՄԱՐԱՇԱՐԸ

ԳԱՌՆԻԿ ՇԱՀԿՅԱՆ

Սանահինի վանքային համալիրը հայկական միջնադարյան ճարտարապետության կարևորագույն և լայն ճանաչում գտած համակառույցներից է։ Այն ամբողջությամբ կամ իր առանձին կողմերով լայնորեն ներկայացված է մասնագիտական գրականության մեջ, նրան նվիրված են մենագրություններ, բազմաբնույթ հոդվածներ, հաղորդումներ։ Դրանով հանդերձ դեռևս հստակեցման կարիք ունեն համալիրի կազմավորման ընթացքը և առանձին հուշարձանների կրած փոփոխությունները։ Վերջիններս վերաբերում են հատկապես համալիրի գլխավոր կառույցին՝ Ամենափրկիչ եկեղեցուն, որի վրա շատ են տարբեր ժամանակներում կատարված նորոգումների և վերափոխությունների հետքերը։ Եկեղեցու կրած փոփոխությունների պարզաբանման խնդիրն առաջին հերթին առնչվում է ճակատների ղարդակամարաշարի հետ, որի կառուցման ժամանակը և սկզբնական հորինվածքը մասնագիտական գրականության մեջ դեռևս հիմնավորապես լուսաբանված չեն, դրանց վերաբերյալ կարծիքները որոշակի չեն կամ էապես տարբերվում են։

Կ. Ղաֆադարյանը Սանահինի հուշարձանների ժամանակագրությանը և արձանագրություններին նվիրված աշխատության մեջ գրում է. «Ամենափրկիչ եկեղեցին շինվել էր այդ նորոգությունից (նկատի է առնված 1181/1184 թթ. նորոգումը—Գ. Շ.) ընդամենը 215 տարի առաջ իր, մինչև մեր օրերը պահպանված, ամբակուռ պատերով և գեղեցիկ, եկեղեցու շուրջը պար բռնող որմնակամարներով։ Նրա արտաքինի վրա մեծ մասամբ պահպանվել են սկզբնական կառուցվածքի գեղեցիկ հարդարանքները, իսկ այն տեղերում, որտեղ այդ հարդարանքները չկան, երևում է, որ փոխվել են միայն պատերի երեսապատ քարերը և ոչ թե քանդվել ու նորից են շինվել դրանք։

...Համենայն դեպս այդ, ինչպես նաև դրանից հետո կատարված նորոգությունները եկեղեցու կառուցվածքի մեջ որևէ փոփոխություն չեն մտցրել, այլ միայն ամրապնդել են նրա խարխլված մասերը, իհարկե, բացի գմբեթից, որ հիմնովին վերաշինվել է այդ նորոգության միջոցին»[1]։

Եկեղեցու պատերի վրա նախապես կամարաշարի ավելի մեծ տեղ բռնելու հանգամանքը նշվում է դեռևս անցյալ դարի վերջերի հեղինակների մոտ. «Ինչպես արևելյան որմի, նույնպես և հարավային ու հյուսիսային պատերի վրա եղել են սյունազարդ կամարներ, որոնցից հարավային որմի վրա եղողը համարյա թե ոչնչացված է, իսկ հյուսիսային պատի վրայինը միայն կիսով չափ է երևում, որովհետև ծածկված է Մագիստրոսի ճեմարան կոչված շենքի պատով...»[2]։ *Այդ հանգամանքը հավաստում և կամարաշարի խաթարված լի-*

---

1 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 27։

2 Ի. Հարությունյան, Սանահին («Ազգագրական հանդես», գիրք Գ, Թիֆլիս, 1898, էջ 293)։

նելը հետագա վերափոխություններով են բացատրում նաև Վ. Հարությունյանը, Ս. Սաֆարյանը[3], Հ. Ոսկյանը[4] և Կ. Հովհաննիսյանը[5]։

Ըստ Ա. Յակոբսոնի, կամարաշարի ներկայիս հորինվածքը սկզբնականն է։ «Երկու շենքերի (նկատի է առնված Սանահինի Ամենափրկիչ և Հաղպատի Ս. Նշան եկեղեցիները—Գ. Շ.) միջև եղած էական տարբերությունը միայն Սանահինի կաթողիկեի արևելյան և մասամբ հյուսիսային ճակատները նրբին զույգ կիսասյուներով մշակված լինելու մեջ է (մնացած ճակատներում կամարաշարը բացակայում է, քանի որ արևմտյան ճակատը փակված է գավիթով, իսկ հարավայինը ուղղված է դեպի սարալանջը, որի պատճառով էլ գրեթե ճարտարապետական մշակման չի ենթարկվել)»[6],— գրում է նա։

Հ. Խալփաղչյանը Սանահինի հուշարձանախմբին նվիրված իր արժեքավոր մենագրության մեջ զարդակամարաշարի վերաբերյալ գրում է. «Երրորդ շինարարական շրջանում (X դ. 80-ական թթ.) Ամենափրկիչ եկեղեցու արևելյան, մասնակիորեն հյուսիսային և հարավային ճակատներում կառուցվել է կամարաշար ու արևմուտքից երկու եկեղեցիներին կցվել է գավիթը (այժմ գոյություն չունեցող)։

... Մեր ուսումնասիրությամբ պարզված է, որ պատերի մակերևույթը սկզբնապես եղել է հարթ, ավարտվելով պարզ քիվով, ինչպես Աստվածածին եկեղեցում, որը տվել է արտաքին կերպարին խիստ վեհություն։

... Որովհետև արևմտյան ճակատը փակված էր գավիթով, կամարաշարով գեղեցկացրին հյուսիսային ճակատի լավ տեսանելի ձախակողմյան մասը, արևելյանը և հարավայինը, ենթադրաբար մինչև կեսը»[7]։

Ինչպես երևում է վերոբերյալից, հեղինակների մոտ զարդակամարաշարը մի դեպքում համարվում է եկեղեցուն ժամանակակից, մյուս դեպքում՝ հետագա հավելված։ Հավանական է դիտվում, որ այն սկզբնապես եկեղեցու պատերին ավելի մեծ տեղ է գրավել (սակայն թե ինչ չափով, որոշակի չէ) և վերացել է հետագա դարերում կատարված վերափոխությունների հետևանքով։ Կարծիք է հայտնվում նաև, որ կամարաշարը մեր օրերն է հասել իր սկզբնական հորինվածքով։ Մյուս ճակատներում դրա տեղ չգտնելը բացատրվում է կից շինությունների գոյությամբ (չխորանալով ժամանակագրության մեջ) կամ դիտողական ընկալման անհարմարությամբ։

Կամարաշարը ներկայումս բռնում է եկեղեցու արևելյան ճակատի ողջ լայնությունը՝ 9 բացվածքով (աղ. I/1), հյուսիսայինի արևելյան կեսը՝ 6 բացվածքով և հարավայինի արևելյան անկյունային մասը, որտեղ պահպանվել են

---

[3] В. М. Арутюнян, С. А. Сафарян, Памятники армянского зодчества, М., 1951, с. 55.

[4] Հ. Ոսկյան, Գուգարքի վանքերը, Վիեննա, 1960, էջ 67։

[5] Կ. Լ. Հովհաննիսյան. Սանահին—Հաղբատ, Երևան, 1978. էջ 7։

[6] А. Л. Якобсон, Очерк истории зодчества Армении V—XVII веков, М.—Л., 1950, с. 87.

[7] О. Х. Халпахчьян, Санаин, М., 1973, с. 18, 29, 30. Այդ մասին տե՛ս նաև նույնի՝ Архитектурные ансамбли Армении, М., 1980, с. 187. Կամարաշարի հետագայում ավելացված լինելը, բացի շենքի արևմտյան կեսում նրա բացակայությունից, Հ. Խալփաղչյանը բացատրում է նաև որմնակամարների միջև շարվածքի քարերի տարբեր մեծությամբ, հորիզոնական էլարերի ոչ միագիծ լինելով, գետնախարսխի վերին եզրատի համեմատ կիսասյուների հաստությամբ, արևելյան ճակատի քանդակախմբում՝ եկեղեցու մանրակերտի տրա կամարաշարի բացակայությամբ («Санаин», с. 30, 31)։

միայն 3 որմնասյունները (արևմտյանը՝ 3 մ բարձրությամբ)։ Եթե մյուս ճակատներում որմնակամարներն ամբողջական են, ապա հարավային ճակատի որմնակամարների քարերից իր տեղում է միայն եզրայինի արևելյան կրունկը։ Եզրային և միջանկյալ որմնակամարների բացվածքներն իրարից տարբերվում են, սակայն տարբեր ճակատների նույնատիպ (եզրային կամ միջանկյալ) որմնակամարների բացվածքները հավասար են, բացի արևելյան ճակատի միջին բացվածքից, որը մյուսների համեմատ լայն է և համապատասխանում է կենտրոնական պատուհանի եզրակալների հեռավորությանը։ Որմնակամարները, որոնք աչքի են ընկնում շեշտված պայտաձևությամբ, հանգչում են կիսագլանիկներից բաղկացած որմնասյուների վրա (աղ. I/2)։ Կիսագլանիկների թիվն անկյունային և արևելյան ճակատի կենտրոնական պատուհանի եզրակալներին համապատասխանող որմնասյուներում 3-ն է, իսկ մյուսներում՝ 2-ը։ Դրանով պայմանավորված՝ որմնասյուների խոյակների և խարիսխների լայնությունները տարբեր են։ Խոյակները, ունենալով նույն ընդհանուր հորինվածքը, շահեկանորեն տարբերվում են բարձր արվեստով մշակված մանրամասնություններում։ Խարիսխները վերևից և ներքևից գոտևորված են օղակներով, որոնց միջև՝ որմնասյուների կիսագլանիկների ուղղությամբ, գտնվում են կիսագնդեր՝ 2 կամ 3 հատ, պայմանավորված կիսագլանիկների քանակով (աղ. I/3)։ Հյուսիս-արևելյան անկյունային որմնասյանը երկու կողմից կից՝ ստորին շարքում, քանդակված են կենդանակերպ արարածներ։ Արևելյան ճակատի հարավային կեսի և հարավային ճակատի որմնասյուների խարիսխները ներկայումս ծածկված են հողի շերտով։

Կամարաշարի կառուցման ժամանակի պարզաբանման հարցում ամենաէականը պետք է համարել եկեղեցու պատերի հետ նրա կոնստրուկտիվ կապի բացահայտումը։

Որմնասյուների քարերն ըստ լայնական չափերի բաժանելի են երկու մասի։ Մի մասն իր չափերով չի տարբերվում պատի շարվածքի սովորական քարերից և որմնասյուների տրամատի սահմաններից մեկ կամ երկու կողմից դուրս եկող սրբատաշ մասերով կատարում է նաև երեսապատման դեր, պատի հետ ունենալով նույն կոնստրուկտիվ կապը, ինչ որ պատի երեսապատման սովորական քարերը։ Վերջիններս կազմում են որմնասյուների քարերի գերակշիռ մասը։ Այսպես, արևելյան ճակատի եզրային որմնասյուներից յուրաքանչյուրի բոլոր 6 քարերն էլ իրենց չափերով և կոնստրուկտիվ կապով չեն տարբերվում պատի շարվածքի անկյունային քարերից։ Նույնը վերաբերում է նաև միջանկյալ որմնասյուների քարերի մեծագույն մասին։

Որմնասյուների կիսագլանիկներ ունեցող քարերի զգալի մասը՝ հատկապես ճակատների ստորին շարքերում, ունի հսկայական չափեր։ Արևելյան ճակատի ստորին երկրորդ շարքում որմնասյուներից մեկի քարն ունի 155 սմ լայնություն (աղ. I/4), հյուսիս-արևելյան անկյունային որմնասյան քարը (առաջին շարքում) հյուսիսային կողմից ունի 120, իսկ արևելյան կողմից՝ 75 սմ լայնություն։ Արևելյան ճակատում դրան կից երկրորդ որմնասյան քարը 175 սմ լայնությամբ է։ Միջանկյալ որմնասյուների քարերի փոքր մասն է, որ լայնական ուղղությամբ հավասար է որմնասյան տրամատի չափին։ Պատի հետ հուսալիորեն կապելու նպատակով այդ քարերը ողջ բարձրությամբ ունեն ելուստ, որը մտած է պատի միջուկի մեջ։



Աղյուսակ 1

Որմնասյունների երևացող բոլոր խարիսխները ևս օրգանապես կապված են պատի շարվածքի հետ։ Դրանք ունեն ոչ թե բուն խարսխի լայնությունը, այլև իրենց չափերով և պատի հետ ունեցած կոնստրուկտիվ կապով չեն տարբերվում պատի գետնախարսխի քարերից։ Հյուսիս-արևելյան անկյունային որմնասյան խարսխի քարը, միաժամանակ ծառայելով որպես պատի գետնախարիսխ, արևելյան կողմում ունի 137 սմ լայնություն և հասնում է հարևան որմնասյան խարսխին (աղ. I/3)։

Որմնասյունների խարիսխները հենվում են պատի գետնախարսխի երկրորդ ելուստի վրա և իրենց բարձրությամբ ու հորինվածքով ձուլվում գետնախարսխի առաջին աստիճանին, որը պայմանավորված է հորինվածքային նպատակահարմարությամբ։

Յուրաքանչյուր որմնակամարի բոլոր 5 քարերից 2-ը՝ կրունկաքարերը (մյուսների համեմատ զգալիորեն երկար կամարաղեղներով) ընդհանուր են հարևան երկու որմնակամարների համար և դրանց սահմաններից դուրս գըտնըվող սրբատաշ մասերով միաժամանակ կատարում են երեսապատման դեր, հուսալիորեն կապված լինելով պատի հետ։ Որմնակամարների մնացած 3 քարերը, որոնց կոր եզրագծով կտրված են պատի շարվածքի հարևան քարերը, մտած են պատի միջուկի մեջ, ինչպես եկեղեցու պատուհանների, մուտքերի կամարային քարերն ընդհանրապես։

Արևելյան ճակատի կենտրոնական պատուհանի եզրակալի երկու կողմի որմնասյունների ստորին մասերը և հարակից որմնակամարների կրունկները (իրենց ընդհանուր բարձիկի հետ) միակտուր քարից են, այսինքն՝ և՛ պատուհանի եզրակալը, և՛ որմնակամարի կրունկը կերտված են նույն քարակտորից (աղ. II/1, նկատենք, որ ուսումնասիրողների մոտ կասկած չկա պատուհանի եզրակալը եկեղեցու հետ միաժամանակ կառուցված լինելու հարցում)։

Պատի միջուկի հետ կապված են նաև որմնասյունները պսակող բոլոր խոյակները, որոնք իրենց դիրքով և տեղադրությամբ միանգամայն հարիր են պատին։

Եթե կամարաշարի կեսից վեր ընկած մասում՝ հատկապես միջկամարային բացվածքներում, պատի շարվածքի հորիզոնական շարքերը որոշակիորեն դիտելի չեն (որը հետևանք է նորոգումների), ապա գետնախարսխի մասում և ստորին 3 շարքում (որոնք ունեն համապատասխանաբար՝ 55, 100 և 95 սմ բարձրություն) դրանք հստակորեն կարդացվում են։

Այսպիսով, պատի շարվածքի հետ զարդակամարաշարի փոխհարաբերության տվյալները վկայում են դրանց միջև կոնստրուկտիվ օրգանական կապի առկայությունը։ Այդ հանդամանքը, ինչպես նաև արևելյան ճակատի կենտրոնական պատուհանի եզրակալի հետ հարևան որմնակամարների կոնստրուկտիվ միաձուլությունը և պատերի ստորին շարքերում որմնասյունների ու խարիսխների փորվածքներով մեծաչափ քարերի նորմալ տեղադրվածությունն ակնհայտորեն մատնում են եկեղեցու պատերի հետ զարդակամարաշարի միաժամանակ կառուցված լինելը։

Այդ են վկայում նաև ճակատային չափերի հետ որմնակամարների բացվածքների հարաբերության տվյալները։ Եկեղեցու մեծաքանքար վարպետն անկյունային մասերը շեշտելու, կամարաշարի ռիթմն ավարտուն դարձնելու նկատառումով եզրային բացվածքներն արել է միջանկյալներից նեղ և արևելյան ճակատի կողքի պատուհանների եզրակալի ձգվածությանը հավա-



Ալբոմի II

սար։ Պարզ է, որ եթե եզրային բացվածքների նեղ լինելը պայմանավորված լիներ եղրակալին հարմարեցնելու ձգտումով, ապա այդ դեպքում անհասկանալի կլիներ միջանկյալ բացվածքների լայն անելը, մանավանդ որ արևելյան ճակատի եղրային բացվածքներից հետո եղած տարածությունում (մինչև կենտրոնական բացվածքի որմնասյուները) նորմալ կերպով կարող էր տեղավորվել եղրայինին հավասար 4 բացվածք՝ ներկայիս 3-ի փոխարեն։ Մյուս կողմից, եղրային որմնակամարների բացվածքը միջանկյալների համեմատ նեղ է արված նաև հյուսիսային և հարավային ճակատներում, որի համար հարկադրական ոչինչ չի եղել։ Էական է նկատել, որ հյուսիսային ճակատի արևելյան եզրից մինչև ներկայումս փակված շքամուտքի եզրակալը եղած տարածությունը ևս բաժանված է նույն համամասնություններով, ինչ որ արևելյան ճակատում։ Դա խոսում է եկեղեցու ճակատները կամարաշարով հարդարելու մտահղացման սկզբնականության մասին։

Եկեղեցու հետ կամարաշարի միաժամանակ կառուցմամբ է պայմանավորված նաև վերջինիս սերտ կապը և միասնությունը ճարտարապետագեղարվեստական առումով, ակտիվ դերը հուշարձանի արտահայտչականության բարձրացման, գեղատեսիլության ընդգծման ուղղությամբ, որի համար այն արժանացել է անցյալի և մեր օրերի հեղինակների բարձր գնահատանքին[3]։ Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ եկեղեցու վրայի մեծաթիվ վիմագրություններում, վանքի շինարարության և պատմության վերաբերյալ հարուստ նյութ պարունակող «Քթթուկում» չկան հիշատակություններ՝ զարդակամարաշարի հավելման մասին։

Ասենք նաև, որ եթե կամարաշարը ժամանակակից չլիներ եկեղեցուն, ապա անհավանական է, որ նրա քարերը տրամատի սահմաններից դուրս ունենային սրբատաշ հարթ մասեր, որով պատի շարվածքի սովորական քարերի նման կատարում են երեսապատման դեր։

Զարդակամարաշարի կառուցման ժամանակի հստակեցումն այլ տվյալների հետ միասին օգնում է գրեթե որոշակի դարձնելու նրա սկզբնական հորինվածքը։

Եկեղեցու հյուսիսային ճակատի արևելյան կեսը բռնող կամարաշարի արևմտյան եզրային որմնասյունով վերջանում է այդ թևի կամարաշարի հորինվածքը, քանի որ նրան արևմտյան կողմից կից է շքամուտքի եզրակալը և, որ կարևոր է, նրա վրա հենվող որմնակամարի հորինվածքն ավարտուն է (եթե միջանկյալ որմնասյուների վրայի կամարակրունկի քարն ընդհանուր է հարևան երկու որմնակամարների համար, ապա արևմտյան եզրային որմնասյան վրայի կրունկաքարը ծառայում է միայն մեկ՝ ձախակողմյան որմնակամարին, աղ. II/2)։

Հյուսիսային շքամուտքից դեպի արևմուտք կամարաշար եղել է, թե ոչ՝ հայտնի չէ։ Այդ մասում ներկայումս եկեղեցուն կից «Մագիստրոսի ճեմարան» կոչվող սրահի գոյությունը դեռևս ոչինչ չի ասում, քանի որ այն իրականացվել է եկեղեցու կառուցումից (966) ավելի ուշ՝ հավանաբար XI դ.[9]։

---

8 Ռոստոմ-Բեկ Երզնկյանց, Նկարագրություն Սանահնի («Մեղու Հայաստանի», 1860, № 1, էջ 4), О. Х. Халпахчьян, Санаин, с. 31—32.

9 Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 30։

Հարցում որոշակիություն է մտցնում ուսումնասիրողների ուշադրությունից վրիպած, սակայն շատ կարևոր մի փաստական տվյալ՝ նախագավթի հարավ-արևելյան անկյունում գտնվող խարխսը (աղ. II/4), որն իր տեղադրությամբ ճշտորեն համապատասխանում է Ամենափրկիչ եկեղեցու հյուսիս-արևմտյան անկյունը (նստած է հենց եկեղեցու գետնախարսխի անկյունային մասում), գտնվում է նույն մակարդակի վրա, ինչ որ հյուսիսային ճակատի արևելյան թևի խարխսները։ Այն ներկայումս մասամբ ծածկված է ճեմարանի սրահի որմնամույթով և նախագավթի հարավային պատով, սակայն որոշակիորեն դիտելի է նրա հորինվածքը, որն ինչպես ընդհանուր ձևերով, այնպես էլ մանրամասնություններով նույնանում է կամարաշարի հյուսիս-արևելյան անկյունային խարսխին (աղ. II/5)։

Կասկած չի մնում, որ հյուսիսային ճակատի արևմտյան թևը ևս նախապես պատած է եղել կամարաշարով, որի անկյունային որմնասյան խարխսը բարեբախտաբար մնացել է տեղում (հավանական է, որ կամարաշարը վերացվել է ճեմարանի սրահի կառուցման ժամանակ)։

Եկեղեցու արևմտյան անկյունից մինչև հյուսիսային շքամուտքի եզրակալն ընկած տարածության բաժանումը շքամուտքից արևելք գտնվող կամարաշարի համամասնություններով, ցույց է տալիս, որ հյուսիսային ճակատի արևմտյան թևում կամարաշարն ունեցել է 5 բացվածք՝ արևելյան թևի 6-ի փոխարեն (շքամուտքից դեպի արևմուտք ընկած մասը կարճ է արևելյանից կամարային մեկ բացվածքի՝ 132 սմ, չափով)։

Եկեղեցու հյուսիս-արևմտյան անկյունային խարսխի առկայությունը վրկայում է նաև սկզբնապես արևմտյան ճակատը կամարաշարով պսակված լինելու մասին։ Դա չի հակասում ներկայիս գավթից առաջ եկեղեցու այդ ճակատին կից ավելի ընդարձակ գավթի գոյության վերաբերյալ կարծիքին, քանի որ այն, ինչպես ենթադրվում է, պետք է կառուցված լինի եկեղեցու (կամարաշարի) կառուցումից ավելի ուշ՝ 979 թ. հետո[10]։

Եկեղեցու հարավային ճակատին պարզորոշ երևում է որմնամույթերի մնացորդներից դեպի արևմուտք ընկած մասի նորացված լինելը, որտեղ երեսապատման քարերն իրենց տաշվածքով և խոռոչների բացակայությամբ ակնհայտորեն տարբերվում են արևելյան մասից։ Այդտեղ՝ եկեղեցու ընդհանուր գետնախարսխի մակարդակից վերև, պատին կցված է կիսագլանաձև վերնամասով ու շեշտված ելուստով 5 մ երկարությամբ գետնախարսխ, որը պատի հետ չունի հորինվածքային կապ, և նրա հետագա հավելվածք լինելն ակնհայտ է։ Արևմտյան եզրային որմնամույթի մնացորդի ուղղությամբ պատն ունի ուղղաձիգ կար, որին կից քարերի փոխադարձ դասավորությունից ևս պարզ է արևմտյան կողմի քարերի հետագայում տեղադրված լինելը։ Որմնասյանը արևմտյան կողմից կից պատի ստորին երկրորդ և երրորդ շարքերի քարերն իրենց կտրվածքով հարմարեցված են որմնասյան քարին (աղ. II/3)։ Կարից դեպի արևմուտք գտնվող երեսապատման քարերը որմնասյան մնացորդներից վերև փակել են նաև որմնասյան ուղղությունը։ Արևմտյան կողմի պատը զգալիորեն առաջ է ընկած (դա որոշակիորեն երևում է նաև աղոթասրահի ներսում՝ հարավ-արևելյան որմնամույթի հետ հարավային պատի միացման կարի ուղղությամբ)։

---

[10] Օ. Հ. Խալիպախչյան, Սանահին, с. 18, 30.

Հարավային ճակատի որմնասյունների մասում պատի շարքերը հիմնականում պահպանված են։ Դրանք չեն համապատասխանում ուղղաձիգ կարից դեպի արևմուտք գտնվող պատի շարքերին, սակայն համապատասխանում են արևելյան ճակատի ստորին շարքերին, որոնց նախնականությունը կասկած չի հարուցում։ Որ հարավային պատը բազմիցս ենթարկվել է վերակառուցումների և փոփոխությունների՝ վկայվում է հենց իր վրա և եկեղեցու այլ մասերում առկա վիմագրություններում[11]։

Կարող ենք ասել, որ հարավային ճակատի արևելյան կողմի որմնասյուների մնացորդներով պատը (3 մ լայնությամբ) նախնական է, իսկ դրանից արևմուտք ընկած մասը, որում նկատելի չեն որմնասյուների հետքեր, հետագա վերափոխությունների արդյունք է[12]։ Հարավային պատին մեծ վնաս է հասցրել երկրաշարժի հարվածից փլված նախնական գմբեթը, որը, ինչպես ենթադրվում է, ընկել է դեպի հարավային կողմը[13]։

Հարավային պատի արևելյան մասում որմնասյուների գոյությունը, դրանցից դեպի արևմուտք պատի վերափոխվածությունը, արևմտյան ճակատը և հյուսիսայինի արևմտյան կեսը ևս կամարաշարով երբեմնի պսակված լինելու հանգամանքը հավանական են դարձնում, որ հարավային ճակատը նույնպես պսակված է եղել զարդակամարաշարով, իսկ դա նշանակում է, որ Ամենափրկիչ եկեղեցին կամարաշարով պսակված է եղել բոլոր չորս ճակատներում, ինչպես կառուցման ժամանակով նրան մոտ կանգնած հայկական ճարտարապետական մյուս հուշարձանները (Մարմաշեն, Անիի Մայր եկեղեցի, Առաքելոց և այլն)։

Որ զարդակամարաշարն Ամենափրկիչի ճարտարապետի համար գեղարվեստական արտահայտչականության հասնելու նախասիրած միջոց է եղել, վկայում է նաև եկեղեցու արսիդը և սկզբնական թմբուկը[14] դրանով պսակված լինելու հանգամանքը։

Հարավային ճակատի կենտրոնական պատուհանը արևելյան ճակատայինի համեմատ տեղադրված լինելով փոքր-ինչ բարձր, չէր կարող կամարաշարի հետ փոխկապակցվել այնպես, ինչպես արևելյան ճակատում է։ Մյուս կողմից՝ բարձրությունների փոքր տարբերության հետևանքով այն կխանգարեր կամարաշարի անընդհատությանը, ուստի հավանական է, որ կամարաշարը հարավային ճակատում ունեցել է նույն հորինվածքը, ինչ որ հյուսիսային ճակատում։

Ամենափրկիչ եկեղեցու զարդակամարաշարի կառուցման ժամանակի և հորինվածքի խնդիրների պարզաբանումը հնարավորություն է ընձեռում ճշգրտելու եկեղեցու ճակատների սկզբնական հորինվածքը, Սանահինի հուշարձանախմբի կազմավորման շրջանները, հուշարձանախմբի դիտողական ընկալման հետ կապված խնդիրները և այլն։

---

11 Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 26—27։

12 Հ. Ե ղ ի ա զ ա ր յ ա ն, Սանահնի վանքը («Էջմիածին», 1958, № 9, էջ 49)։

13 О. Х. Х а л а т х ч ь я н, Санаин, с. 33.

14 Նույն տեղում, էջ 30։

ДЕКОРАТИВНАЯ АРКАТУРА САНАИНСКОЙ ЦЕРКВИ АМЕНАПРКИЧ

ГАРНИК ШАХКЯН

Резюме

Время построения и первоначальная композиция декоративной аркатуры санаинской церкви Аменапркич пока окончательно не выяснены. Мнения специалистов по этим вопросам расходятся, к тому же они весьма неопределенны.

Органическая конструктивная и архитектурно-художественная связь аркатуры со стенами церкви свидетельствует об их одновременной постройке.

Наличие угловой базы полуколонок, сохранившейся внутри предпритвора в северо-западном углу церкви Аменапркич (не привлекавшей внимания исследователей), а также другие данные, связанные с вопросом композиции аркатуры, явствуют, что в первоначальном виде аркатура опоясывала все четыре фасада церкви.

Определение времени постройки и первоначальной композиции аркатуры дает возможность уточнить первоначальную композицию фасадов церкви, этапы формирования монастырского комплекса, вопросы его визуального восприятия и др.